

ԲԱՅԵՆԵՐ

Ի Պոլսի արհի-
եպիսկոպոսի 10 հոգի
վարդապետ 5

Ի Կոստանդնուպոլսի

հոգևոր 12 հոգի

վարդապետ 6

ԿԱՆՈՒՄ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
շին տպուիր:

Հասցէ

DIBAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ԶԱՐԲԱՅԱՆԴԵՍ ՍԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՅՏԱԿԱՆ

Դ ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 29 ՅԱՐԱՐ 1900

ԹԻՒ 172

ՅԱՐԳԱՆՔ ՄԸ

Յ. ԶԱՔԸՐԵԱՆԻ ՅԻՅԱՏԱԿԻՆ

«Գնա մեռի՛ր, եկուք սիրեմք»

Ձեյթունցի ես, ժայռի ձագ ես, հերոս կամ թէ նահատակ,
Արդարութեան միշտ ջատագով, զրկանքի թիւն համբերցիր,
Տուն, արտօրէք, կին ու զաւակ և ծաղկատի բո հասակ
Խտէալիդ զո՛հ տուիր դուն, աւերակաց չափն առի՛ր:

Թողջըտեցար միշտ անկուն հովան հովիտ, սարէ սար,
Մօր տուիր սուր ու գնտակ, վերքերուդ լաթ ունեցար,
Տասնեակ շուներ դու շամիրեցիր, բոլի անուն ստացար,
Բայց ցոյց ձակտիդ դափնէ պտակ, հոն փուշէ դատ ի՞նչ գտար:

Թշուառութեան խոր անգունդէն վեր նայեցար յուսահատ,
Չմտածած կանչելքեղ օգնութեան, պարապին մէջ ի՞նչ տեսար
Վերն ալ ոչինչ վարն ալ ոչինչ, արցունքներովդ մշտառատ,
Ըսէ՛ տեսնեմ, դու այս կեանքէդ, յիսնամեկէդ ի՞նչ ուսար:

Ալ ի՞նչ ուրեմն աղտոտ կենաց դու կը փարիս խօլորար,
Այս յեղակարծ փոթորիկը կայծակէ գատ ի՞նչ ունի,
Հիչ տեսեր եմ գլխիդ վրայ անամպ երկինք, օր պայծառ,
Ըսէ՛, այս մեծ ստուգութիւնը պատրանքէ գատ ի՞նչ ունի:

Մեռի՛ր մեռի՛ր, որ քեզ սիրենք,

Յիսնամեկիդ տօն կատարենք,

Քար չենք դնել, բայց չոր խօսքով

Շատ կը թրչենք հոգդ արցունքով:

Տ.

Բանաստեղծական աս տողերը իրեն ձօնուելէ
երկու տարի յետոյ 1899 Յուլիս 26-ին ոչ եւս էր
Զաքըրեան:

Դըրդող ձայնը, որ քառսուն երկար տարի-
ներ թէ ճաւրոսի աստուածապատիւ բազուկնե-

րուն վրայ և թէ նոյն իսկ ահարկու Ուլթանին
բթին տակ գողացած էր այնքան անփեհեր, այս
անգամ կերթար յախտենապէս լռելու մէթրի
չափ նեղ փոփ մը մէջ, զոր Աստուածային հեղ-
նութիւնը կը բանար անոր առջեւ, այնքան ան-
գութ ու անկարեկի:

Ասպետական Ձեյթունցին, որոյ բոլոր էու-
թիւնը լեցուած էր իր հայրենիքի հմայքներովը,
իրաւ որ մոռցած իր զաւակներուն տառապանքը,
չատ անգամ աղու մը պէս կուլար... կուլար
միայն իր հայրենիքին համար: Այդ լացող աչ-
քերն են, զոր Աստուած փակեց յախտենապէս,
առանց իր պաշտած Հայրենիքը վերջին անգամ
մըն ալ տեսնելու միջթարութիւնը տալու ա-
նոր:

Յնչտիներու մէջ, ուր կապրէր վերջին տա-
րիներ խտէալական այդ հպարտ Ձեյթունցին,
չատ քիչեր ճանչցած էին յանձին անոր, անգու-
ղական վարժապետը, որ աղգային անխառն զար
դացումով հոգի ու սիրտ ներշնչած էր իրենե-
րուն, մեծ գաղաքարը իրականութեան փոխելու
անհուն տենչով խանդավառ:

Ոչ ոք համբոյրի տարափներով ծածկել ու-
ղած էր սուրբ սպիները, զոր անտիական հա-
սակէն սկսեալ լերանց անմատչելի ծէրպերուն
մէջ պարբերաբար ստացած էր Ազիլ փաշայի
նման խել մը բռնաւոր ու նենգամիտ թշնամի-
ներէ:

Ոչ ոք գրեթէ իմացած էր անոր հրապարա-
կային յանդուգն պայքարը նոյն իսկ թուրք ոս-
տանին մէջ սատրապամ Բեհմիլ փաշայի դէմ, որ
ծածկանունով մը Լեւանդ Հեռայի էջերուն մէջ
ապաստանած, ի զօր պաշտպանել փորձած էր
ինքզինքն ու իր կառավարութիւնը Զօլաք վար-
ժապետին արդար ու սարսափացիչ դիտողու-
թեանցը դէմ:

Վերջապէս ոչ ոք պէտք եղածին պէս սերտած էր անոր կեանքը, որ համակ մարտիրոսութիւն, անկեղծութիւն և յանգ դնութիւն եղած էր:

Եւ Հանրութեան այս տղիտութիւնը ու անոր բեղմնաւոր կեանքին նկատմամբ ցոյց տուած անհոգութիւնը անմեկնելի պիտի մնար մեզ համար եթէ հայ առածի մը պարեւոր ճշմարտութիւնը չը պար յիշեցնելու այն տխուր երևոյթը, որ ամեն օր կը ցոյց մեր բարուցը մէջ. «Կնա՛ մեռիւր, եկա՛ւր սիրենք»:

Ու մենք հաւատարիմ այդ առածին, այնքան անգամ որ առիթը ներկայանայ, այն արցունքով պիտի թրջենք անոր հոգը. հոգ չէ՛, որ զիրար բզկտող երկու հակընդդէմ տնայրեր՝ մէկը սովալլուկ գայլի մոլորացներով ու միւսը ազաւի կռիւններով գիշատել ուզեն անոր դիմը. մէկը «օխ» պոռայ, իսկ միւսը՝ անոր կեղծաւորաբար լացած ըլլալը ապացուցանելու համար աչքերուն տիւ ու սխտոր քսելու վիպակը ստեղծէ. մենք զինքը ճանչցողներս ծունր դրած իր գերեզմանին առջեւ, յաղթանքի արցունքներով պիտի թրջենք զայն և նուիրագործենք բանաստեղծին հետագայ մտմտքիչ տողերուն ճշմարտութիւնը.

Մեռա՛ւր մեռիւր, որ քեզ սիրենք,
Յիւնամեկիկ ասն կատարենք:
Քար չենք գներ, բայց չոր խօսքով
Շատ կը իրջենք հոգի արցունքով:

ԾԱՆՕԹ

Յ. Զաքարեան, որոյ կենսագրութիւնը յարմար առիթ կը խոստանանք մանրամասնօրէն ներկայացնել հայ ժողովրդեան, մեռած է ինչպէս ըսինք, 1899 յուլիս 26ին Պուրթէշի մէջ եւ քանի մը բարեացակամ անձերու շնորհիւ փառաւոր թաղում մը ունեցած:

ԱՅԴԱՅԻՔ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՖ. ԷՍԱԵԱՆ

Երէկի «Արեւիք»-էն կարտատպենք հետեւեալ տըխրառիթ յուրը.

Յովհաննէս ԷՖ. Էսաեանի մահուան գոյժը հինգ-չարթի առաւօտ տարածուելով մայրաքաղաքիս մէջ՝ տխուր տպաւորութիւն մը թողուց ազգին ամեն դասակարգերուն վրայ որոնք անխափր կը սիրէին այդ պատուական անձնաւորութիւնը:

Յովհաննէս ԷՖ. Պալոնիւ-սիւռ-Մէն դացած էր, Բարիկէն չորս ժամ հեռու ծովեղերեայ աւմարանոց մը, կաղզուրուելու համար. կարճատեւ հիւանդութենէ մը ետքը աւանդած է իր հոգին այս չորեքշաբթի օրը, շրջապատուած իր ընտանիքին անդամներին: Մկրտիչ ԷՖ. Էսաեան որ Լիմի ջերմուկները կը դաժնուէր, փութացած էր իր եղբոր սնարին մօտ եւ հինգ շաբթի իրիկան ինք հեռագրած է տխուր լուրը իր որդւոյն՝ Վահան ԷՖ. Էսաեանի որուն վրայ կը ծանրանար իր հօրեղբոր մահը հանգուցելոյն մօրը՝ Տիկին Աննա Էսաեանի գոժելու գառն պարտականութիւնը: Իսրին է երեւակայել այդ ծերունի տատարին մօր սուգը՝ իր որդւոյն մահուան գոյժը լսելով, որուն չէր ուզեր հաւատալ ի սկիւն այնքան ահեղ կուգար հարուածը իր սրտին:

Յուզարկաւորութեան կարգադրութիւնները տակաւին յայտնի չեն, բայց տարակրթ չլայ որ հանգուցելոյն մարմինը զմառուելով Կ. Պոլիս պիտի փոխադրուի, եւ արժանաւոր է որ ամփոփուի Բերայի Ս. Յարութիւն եկեղեցի շրջափակին մէջ:

Երեքշաբթի օրը գումարուած նպատեց Յանձնաժողովին հազարդուեցաւ Մոսկուայէն Ս. Պատրիարքին ուղղուած այն հեռագիրը, որ Պ. Գրիգոր Զանչեանցի մահը կը դուժէր: Ս. Պատրիարքը մանրամասնաբար բացատրեց բարեկշառակ հանգուցելոյն 1897 թուականէն սկսեալ ինչևցարդ 7500 ոսկիէ աւելի գումար մը Պատրիարքարանի տրամադրութեան տակ դրած ըլլալը, ուրկէ թէ կարօտելոց հացադին բաշխուած և թէ 12 որբանոցներ բացուած և մինչև ցարդ խնամուած են: Ժողովը իր խորին վիշտը յայտնեց այս մեծ կորուստին համար, և Ս. Պատրիարքը հոգւոց մը կարգալով Յանձնաժողովը ի յարգանս հանգուցելոյն, գաղթեցուց իր նիստը, Որչուեցաւ նաեւ հոգեհանգստեան յատուկ պաշտօն մը կատարել, որուն ժամանակը որոշել Ս. Պատրիարքին յանձնուեցաւ:

Նոյն օրը գումարուած Կրօն. Ժողովոյ մէջ ալ Ս. Պատրիարքը բարեկշառակ հանգուցելոյն հոգւոյն համար հոգւոց մը կարգաց:

— Խառն ժողովը մերժեց է Վանայ այցելու հովիւ Տ. Ներսէս եպիս. Ասլանեանի հրատարակա-

նը, եռամսեայ արձակուրդ տալով Պոլիս կամ այլուր երթալու առողջութիւնը դարմանելու համար:

— Իտալիոյ Մարկարիթա մայր թագուհին իր քաղաքային տան դիւանապետին միջոցաւ Մոն-ձայէ հեռագրով շնորհակալութիւն յայտնեց և Պատրիարքին ցաւակցական հեռագրին ի պատասխան:

— Շումլաէն գաւառացի ուղղային մը իր կնոջը կրօնավիտ ըլլալը մէջ բերելով, Պատրիարքարանէն խնդրած էր որ նորէն ամուսնանալու հրաման տրուի իրեն: Կրօնական ժողովը այսմասին բացատրութիւն ուղած էր Վանի այցելու հովիւ Արսլանեան Բայրակպոսէն, որ հաստատած ըլլալով եղած առաքելութիւնը, Կրօնական ժողովը իր վերջին նստին մէջ որոշեց է գրել Պուլ-կարիոյ ալցելու հովիւ Պաղճեան վարդապետի որպէս զի յիշեալին կրկնամուսնութիւնը արտօնէ:

— Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը՝ Պարոնեանի երդասիրութեանց հրատարակութեան անոր ժառանգարդներուն իրաւունքը և զող 600 ֆրանքը վերջապէս զրկեց է հանգուցելոյն եղբոր Սահակ Պարոնեանի որ որբերուն խնամակալն է, ամեն կողմէ եղած այնչափ իրաւացի գիտողութիւններէ ու պահանջներէ ետքը: Ու միթէ չնչին վարձք մը չէ՞ բաղդատմամբ Պարոնեանի գործերու արժանիքին:

— Պուլքսէյէ կը գրեն թէ Օր. Մարի Զիչէք-ճի անուն հայուհի մը որ 2 տարիէ ի վեր հոն Արուեստանոցի մէջ կարու ձեւի ճիւղին կը հետեւէր, անցեալ շաբթու իր քննութիւններն անցունելով ստացեր է առաջին վկայական Ամենամեծ յաջողութեամբ: Նմանօրինակ վկայական մը կարու ձեւի ճիւղին մէջ խիստ հազուադէպ է եղեր, այնպէս որ 25ամեայ շրջանին մէջ այս երրորդ աշակերտն է որ կրցած է ստանալ պարագայ մը որ պատիւ կը բերէ մեզո:

— Հրատարակուեցաւ ԲԱՆԱՍԷՐԻ Բ. տարւոյ Ա. Պրակը ճոխ եւ շահեկան բովանդակութեամբ: Տարեկանն է 20 ֆր. չորս պրակի համար: Հասցէ ՊԱՍՏԱՃԵԱՆ 112 Պղ. Ռօշըշուառ. Բարիկ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հունիս 25 յուլիս

Ամոյս 21ին Հունիսի Թաղ. Խորհրդը Ատենայեւ Տիար Մանուկ Պաղտասարեան աղերսագիր մը կընդունի Ըրպէքս Բալից անուն հրեայ օրիորդի մը ստորագրութեամբ, (յիշեալը բնիկ Բուսանիոյ Կալաց քաղաքէն ըլլալով, 10 տարիէ ի վեր Բուսանոց բնակչութեամբ կ'ըմբռնուի եղբոր) որով փափագ յայտնած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կրօնքն ընդունելու:

Անցեալ կիրակի (23 յուլիս) Թաղ. Խորհրդը նիստ կը գումարէ և իր ներկայութեան կը կոչէ վերոյիշեալ հրեային, հարցնելու համար թէ նոյն աղերսագիրը ի՞նչը ստորագրած է, և թէ իրօք կը փափագէ՞ քրիստոնեայ ըլլալ: Օրիորդը բերանացի ալ կը կրկնէ աղերսագրին պարունակութիւնը: Ասոր վրայ Թաղ. Խորհրդի կողմէ խնդիրը ըստ օրինի կը տեղեկագրուի Նահանգապետին որ իր հաւանութիւնը կուտայ: Ու երէկ, 26 յուլիս տեղւոյ Ս. Աստուածածին եկեղեցին մէջ ժամը 8ին յիշեալ հրեային մկրտուեցաւ ձեռամբ Տ. Օհան Մանգակունի քահանայի, կնքահայրութեամբ նոյն քահանային երեք տարեկան Յակոբիկ տղուն:

Նոր խորհուրդին յառաջիկայ երկուշաբթի կը պըսակուի Հունիսի Տ. Յովնան Յովնանեանի հետ, որ 15 տարիէ ի վեր ի Բուսանոց ժամագործութեամբ կաշխատէր և խանութի դրկիցութեան պատճառաւ առիթ ունեցած էր օրիորդին ծանօթանալու:

* * *

Գիւղերու և արտասահմանի բաժանորդներէն կը խնդրենք որ իրենց բաժնեգիրն վըճարեն:

ԶՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագրական տառեր, մասնաւորաբար Հայերէն եւ Թուրքերէն, Էսպան, քարաթ, Էնթերլինք, Գիծ եւ Կարնիւթիւր:

Գիները յոյժ գիւրամատչելի: Հասցէ

AGOP DZÉROUNIAN SOPHIA (BULGABE)

ԶԱՆԱԶԱՆՔ

— 0 —

Պարսից Շահը

Պարսից Մուզաֆֆէրէտտին Շահը որ այս միջոցիս Բարիզի Արուեստահանդէսը կայցելէ, 50 հետեւորդներ ունի: Իր համազգեստին վրայ 72 հատ ծանրագին աղամանդներ կը դանուին ուրոնցմէ երեք հատը զետեղուած են տաւերուն վրայ իւրաքանչիւրը արծաթ 5 ֆրանքնոցի մեծութեամբ և որոնց նմանը կըսեն թէ ցարդ տեսնուած չէ: Շահը 47 տարեկան է և 4 տարի է որ յաջորդած է իր հօր Նասրէտտին Շահին: Քսանը վեց զաւակ ունի, 6ը մանչ եւ 20ը ազնիկ ու ինքը 100 կիներու ամուսին է:

Զինացիք ու Համրոյրը

Զինատանի սահմանազրկութներուն ներքը վիտացող 400 միլիոններուն մեծ մասը գեռ կ'անցկտանայ թէ ի՞նչ է չրթներու դպչիլը, սիրեցեալ էակի մը չրթներու կամ երեսին:

Երբ Զինացիները կը տեսնեն եւրոպայիներուն զիրար պագնելը, պժգանք կ'արտայայտեն:

Համբուրելու սովորութիւնը կը նկատեն իբրեւ ամենատգեղ բաներէն մին, որոնցմէ սասանայ օտարականները կ'ախորժին:

Զին բնակող Եւրոպացիները չ'են կրցեր երբեք վարժեցնելու Զինացի ազախին մը՝ որտանց պագնելու երախայ մը: Երբ երկու Զինացիներ ուզեն իրենց փոխադարձ համակրանքներն արտայայտելու, իւրաքանչիւրն իր ձեռքերը կը բերէ կը միացնէ կուրծքին առջև, յետոյ զանոնք երեսին կը տանի, թեթեւակի գլուխը ծռելով: Երբ Զինացի մը ուղէ յարգանքով մը բարեւել կը ծնրադրէ:

ԿԻՆԸ

— Կինն աղքատ ընտանեաց մէջ խնայողութիւն, կարգապահութիւն և նախախնամութիւն է: Ինչ ազդեցութիւն որ շահի գէպ ի բարոյակաւնութիւն, յառաջդիմութիւն մ'է:

Միշտ

— Մարգարէ Վերջէն խորամանկ կ'ըլլայ, կինը խորամանկ կը ծնի:

Սակաւ — Տիպէյ

— Թէ՛ խոհմ և թէ՛ գեղանի կին մը գանձ մը կարծէ, եթէ միայն շապիկ մը ունենայ իսկ:

Սենեկաւ

— Դժոխքը կանանց լեզուներով սալարկուած է:

Արքա Կիյոն

ՊՏՈՅՏ

ԲԱՐԻԶԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍԻՆ, ՄԷԶ

9

Միացեալ Նահանգաց ճաղաւարտ — Դմէթաւոր փառաւոր չէնք մը որուն ճակատին կողմը սիւնաւարդ գաւթակի մը վրայ կը բռնաբանան Սալինիդէնի և Ամերիկեան Անկախութեան դեղակերտ արձանները:

Միացեալ Նահանգաց տաղաւարը ցուցագորութեանց մասնաւոր բաժիններ չունի գրէթէ, իր ներքին մասերուն մէջ կը տեսնուին միայն ընդարձակ սրահներ, աշխատութեան սրահներ, ընդունելութեան սրահներ ևն: Ասոնց պատերուն վրայ աչքը կը զարնեն զանազան նկարներ որք պատմական գէմքեր և տեսարաններ կը ներկայացնեն, ինչպէս նաև Միացեալ Նահանգաց բոլոր նախագահներուն անունները:

Նորմէիոյ ճաղաւարտ կը գտնուի Պէլժիոյ և Գերմանիոյ տաղաւարաց մինչև ամբողջովին եզլենափայտէ շինուած, Նորմէիոյ գիւղական չէնքերուն ոճով, միայն թէ պահանջուած պերճանքներով և գեղադարդութիւններով: Շէնքին ներքին կողմը ցուցագորուած առարկայից մէջ ուշադրութիւն կը գրաւեն ի մէջ այլոց ծովային և ձամաքային կենդանեաց շահեկան հաւաքածոյներ, ուր կը տեսնուին ճերմակ արջեր, ծովափղեր, կէտեր, կիտաժանիներ, ևն: Յետոյ կուգան իրենց կարգին՝ ձկնորսութեան և որսորդութեան կալմածներ, հազուագիւտ մուշտակներ, ինչպէս նաև բեւեռային նաւարկութեան վերաբերեալ զանազան նաւերու օրինակներ: Առաջին յարկին մէջ մասնաւոր ապակեփեղկի մը մէջ ի ցոյց դրուած է հաւ-

ատարիմ՝ ընդօրինակութիւն մը նանսէնի օգա-
նաւուն, որով հռչակաւոր երկրախոյզն ի հիւսիւս-
քեւեռ նաւարկեց: Հոն կը տեսնուին նաև զանա-
զան առարկաներ, զորս նանսէն գործածեց իր
արկածալից ճամբորդութեան միջոցին:

Մոնախոյի սաղաւարին ցուցադրուած առար-
կայից մէջ նշանակութեան արժանի են զանա-
զան գեղակերտ պատկերներ. երկնեւորանգ ծաղիկ-
ներ և գիտական շահեկան հաւաքածոյ մը զոր Մո-
նաքոյի իշխանն անձամբ կալմած է իր ճամբոր-
դութեանց միջոցին:

Երկնային մեծ գունդը — Արուեստահանդէ-
սին մէջ Երկնային մեծ Գունդին բացման հանդէսը
տեղի ունեցաւ ընտրեալ բազմութեան մը առջև.
ամբողջ օրն ու գիշերը նշանաւոր անձեր յաջոր-
դաբար այցելեցին այս գեղեցիկ յիշատակարանը
որոյ արտաքին երեւոյթը միայն բաւ է տմենուն
հիացումը գրաւելու:

Այցելուին սքանչացումը կ'աւելնայ երբ մանա-
ւանդ հսկայ գունդին ներքին մասերը գիտէ: Երկնա
գունդն երեք յարկերու բաժնուած է: Առաջին
մէջ կը տեսնուի գունդին հիմը, որուն շուրջը
զարդարուած է ծաղիկներով և տունկերով: Անոր
վրայի յարկին մէջ հաստատուած է ճաշարան մը:
Երրորդ յարկը կը ներկայացնէ երկինքը իր
ամբողջ լուսաւորներով: Անհունութեան մէջ եր-
կինն յամբօրէն կը դառնայ իր առանցքին վրայ:
կարծես թէ այցելուներն եթերական վերնագաւ-
առներու մէջ կը շրջին և աշխարհներու ճշմարիտ
յօղաշրջման մը հանդիսատես կ'ըլլան:

Երկու սանդուխներ կ'առաջնորդեն այցելուն
երկրին մէջ: Հասարակածէն կը տեսնուի երկնքին
մէկ մասն որոյ լուսաւորներն միևնոյն ժամանակ
կը ծագին: Աւելի վերը կը գտնուի Բարիզի լայ-
նութիւնը: Վերջապէս այցելուն կը տեսնէ Հիւս-
սիսային բևեռը և կը հետեւի լուսնոյ զանազան
երեւոյթներուն՝ երկրին շուրջ իր կատարած շարժ-
ման մէջ: Արուեստահանդէսի այս հսկայ երկնա-
գունդը խիստ օգտակար պիտի ըլլայ, գիտու-
թիւններու ամէնէն հետաքրքրականն և ամէնէն
գիտարիմացն հասարակութեան մատչելի ընծա-
յն լով:

(Շար.)

Տ.

ԺԱՄԱՆՑ

ՈՂՋԵՐԹ

Սեպտեմբերը կը մօտենայ. աշուն է ան.

Բարբոյն և ինարբ կը դողդողան.

Ձի գիսես ա', յանցաւորներն երաւ երաւ

Դիմեն իշու մոք փաւարան:

Դաս դասարան վերաբացուին. քոյ՝ որ ճկուն

Տեսնենք օձի քու գաւարում.

Թոյ՝ որ աշնետ ծափենք խանդով, գլխու փորձանք

Շարժումներուդ կոսրցանք:

Փոքն ի հարկէ սուրբ եւ կեղծ շուշան վարդ, օճ

Շուրս անհետին, ցրուին հոս հոն.

Ձի բնական օրէնք մըն է, կեղծ գոյն, դիմակ

Օր մը կիշնան ոսկերու քակ:

Դիշերները մոակ ջարդոյ ո'վ դու հերոս,

Վերադարձիդ կ'ապաստենք հոս.

Ձրոյայ մի օր փնտնենք քեզ քոյր ծածուկ

Թափսոցիդ զո'ր ծակն ու ծուկ:

Մէջքդ ծոն, ախաղ ցցէ. կեղծ խնդումով,

Հրեական ցից մօրմոքով,

Ապսակը կե'ր, պսակէ՛ գետին ու անդադրում

«Օյ, յաղքեցի» կանյուղոսէ՛ դուն:

Կապէ՛ յաթաթ զարնոյ կործիդ, սոսէն զրան

Խարդաւորքեան ել ի սրան.

Ի՞նչ կըրոյս պէ՛. դուն յես հոս հոս, դուն մենե՛ հերոս,

Խնդացո'ր մեզ միմոս միմոս:

Անունդ Ղուկաս, եկար կերթաս. սեզ կամ արի

Ձր հանդիպի ոսկրդ փարի.

Երթաս քարի, քան յենք քսեր, հազար քարի

Ձր գալ չընես, քայց առ վախի:

Դուն յես հոս հոս, դուն մենե՛ հերոս ցնդած միմոս

Վերադարձիդ կ'ապաստենք հոս.

Երթաս քարի, հազար քարի, քոյ, անարի

Ձր փախիս հա, դուն, առ փախի:

Տիւնճէ

Ծ Ի Ծ Ա Ղ

Գինեմուլի մը այրին փափաքելով իր էրկանը գերեզմանին վրայ դամբարան մը կանգնել, քարակոբի մը կը ներկայանայ.

Արուեստաւորը— Ի՞նչ ձեռով կուզէք որ պատրաստեմ դամբարանը. խաչաձեւ, կոթաձեւ, թէ սնտուկի ձեռով.

— Ո՛չ մի՛ն, եւ ոչ մի՛ւսը պարոն. այլ տակառաձեւ:

— Ա՛խ, հոգիս, բառ մը, գթացէ՛ք վրաս, ապա թէ ոչ այս տեղս սահմանուած է գերեզմանըս ըլլալու:

— Կը սխալիք պարոն, յիմարանոցը սահմանուած է ձեզի գերեզման ըլլալու:

ՏԵՐԵՊԻՐ

(Աժանս Բոժոժիկ եւ Ընկ)

Քամշաթքա

Վարժապետներու բաղմութեան շնորհիւ այս միջոցին Մուսալլայի հրապարակը բաւական ոգևորութիւն կը տիրէ, որովհետեւ, ամեն օր, պակասին չալկած վարժապետներ ու վարժուհիներ թէ՛ շոգենաւով և թէ՛ շոգեկառքով, հասունցած տանձի պէս հոս կը թափին կոր:

Սալարալիսին գինը բաւական ինկաւ:

Թ. Բազարճըզ

Վարդավառի տօնին հոս Պատարագ չեղաւ, շնորհիւ շնորհունակ աստանդաշըիկին, որ ըրաւ չըրաւ տեղւոյս 60 տունէ բաղկացած խաղաղ հայ ժողովուրդը իրար ձգեց:

Սըթմա բունար

Ազգ. վարժարանի Խնամակալութիւնը՝ Տաւրէնի մանկապարտիզպանուհիին պօսճան խօլթուխը տալով երթաւ բարովը կոխեց:

Քըզրաճափ

Աստանդաշըիկը խառն խահվէճիութենէն

վազ անցաւ, յաճախորդներուն ցրուուելուն պատճառաւ, որոնք կը տրտնջային թէ խահվէճին տեղ՝ լէպլէպի կը խմեն կոր:

Նորին շնորհունակութիւնը հիմա մտադիր է խաճաճի մը հետ ընկեր ըլլալու, որովհետեւ կըսէ թէ այս արհեստին դրամացուխը չիւրիչ ու մոխրապա ըլլալուն հարիւրին 75 շահ կը ձգէ եղեր:

Մարիճա գետ

Անցեալ իրիկուն վարժարանիս տնօրէնը տեղ մը հրաւիրուած էր, ուր կրանքանքուին առատ միանգամայն պատիհալա գտնելուն՝ զորս դու պատուիրեցեր կը ճնկէ. տուն վերադարձին՝ փողոցին մէջ ինկած՝ սոսկալի ձայներով կը սկսի կըլլածը դուրս տալ. մօտակայ տուններէն կազ թէնէքէսիններով ջուր կը հասցնեն ու տնօրէնին շոգիացեալ զուխը զովայնեկէ ետքը խօլթուխները մտած տեղը կը տանին:

Այս դէպքը անմիջապէս հեռագրուեցաւ Վէֆիլ-խմբագիր վարժապետին՝ որ պատրաստ կենայ եւ հրապարակային քննադատութեանց գէմ զօռլու տեսակէն պաշտպանողական յօդուած մը պատրաստէ, յայտարարելով թէ փսխողը տարիքոս կին մըն էր:

Վերջին ժամ

Քամշաթքա

Ազգ. վարժարանի ուսուցչական մարմնոյն մէջ կարեւոր փոփոխութիւններ եղան. Սրապը գնաց՝ Սրապիոնը եկաւ, Զարուկը պիտի երթայ՝ Զարուհին պիտի գայ:

Ուլիցա բօթբօթ

Ամեն կողմ յանձնարարութիւններ եղան՝ ի մօտոյ բացուելիք Կեդրոնական վարժարանին մէջ դասախօսելու համար երկու սալանկէօզով խտարէ ըլլող համայնագետ վարժապետներ հասցընելու:

Որոշուեցաւ գիշերօթիկ վարժարանի մը անունը փոխելով «Համազգային վարժարան» դրնել. որովհետեւ ամեն ազգէ ալ աշակերտ պիտի ընդունուի, բայց այս անուանակոչութիւնը առայժմ չպիտի տարաձայնուի:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ

Печат. Хр. Н. Войниковъ—Варна